<<24>> 02. 2023թ. Ք.Մասիս Ոստիկանության Մասիսի բաժին

/վայրը/ /ստորաբաժանման անվանումը/

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 40
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ոստիկանության Մասիսի բաժնի պետ, ոստիկանության գնդապետ՝Վ.Պ.Գրիգորյանս քննելով <<10> 02. 2023թ. Թիվ 40 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը.

Պարզեցի, որ 10.02.2023թ.-ին 14:30-ի սահմաններում Բենիկ Ֆելիքսի Սարգսյանը/ծնվ.24.07.2003թ., բն է Մասիս, Սիփանիկ, 13 փ., տուն 13/ գտնվել է Մասիս քաղաքի կենտրոնական հրապարակում գտնվող հասարակական տրանսպորտի կանգառի ծածկի տակ օգտագործել է ծխախոտ, որով խախտել է 2020թ-ի փետրվարի 13-ի ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 7-րդ կետի պահանջները և կատարել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 173.2-րդ հոդվածով նախատեսված արարք,այն է օրենքով սահմանված ծխախոտային արտադրատեսակի կամ ծխախոտային արտադրատեսակի փոխարինիչների օգտագործման կամ օգտագործման սահմանափակման արգելքը խախտելը:

Ղեկավարվելով ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 224-րդ հոդվածով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Բենիկ Ֆելիքսի Սարգսյանին

/իրավախախտում կատարած անձի անունը,հայրանունը.ազգանունը/

Տուգանել 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ գումարով՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 173.2 հոդվածի համաձայն :

Ինձ բացատրվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288 հոդվածով սահմանված որոշման գանգատարկման կարգը,որի համար ստորագրում եմ

_____ _____

/ ստորագրությունը/

Ստացա որոշման մեկ օրինակը՝<< >>_____2023թ. _____

Պետ,

ոստիկանության գնդապետ Վ.Պ.Գրիգորյան